

Կենսաբանություն, I ՓՈԻ-Լ
տևողությունը 60 րոպե
10-րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

1. Երկտուն բույս է.

1. եղինջը
2. երեքնուկը
3. վարունգը
4. խնձորենին

2. Ստորև բերված բույսերից ո՞ր բույսի պտուղն է կոչվում հատապտուղ

1. դեղձ
2. վարունգ
3. գետնամորի
4. բանան

3. Քնախտի հարուցիչն է.

1. պլազմոդիումը
2. տրիպանոսոմը
3. կոկցիդիումը
4. ցեցե ճանճը

4. Ավտոգամիան բնորոշ է.

1. արմատոտանիներին
2. մտրակավորներին
3. սպորակիրներին
4. ինֆուզորիաներին

5. Արյան պլազմայի սպիտակուց է հանդիսանում.

1. ակտինը
2. գամա-գլոբուլինը
3. միոզինը
4. հեմոգլոբինը

6. Բակտերիաների մտրակները բնութագրվում են միկոխոդովակների հետևյալ դասավորությամբ.

1. 9 +2
2. 9+1
3. 9
4. չունեն միկոխոդովակներ

7. Նատրումի ացետատը, որպես ածխածնի աղբյուր օգտագործող բակտերիաները.

1. միքսոտրոֆներ են
2. հետերոտրոֆներ են
3. ֆոտոավտոտրոֆներ են
4. քեմոավտոտրոֆներ են

8. Պուրինային հիմքերի շարքին են դասվում.

1. ադենինը և գուանինը
2. թիմինը և ադենինը
3. գուանինը և ցիտոզինը
4. ադենինը և ուրացիլը

9. Երկրորդային մեզը տարբերվում է առաջնային մեզից.

1. կալիումի իոնների ու գլյուկոզի ավելի բարձր և նատրիումի ավելի ցածր պարունակությամբ
2. միզանյութի ու գլյուկոզի ավելի բարձր և նատրիումի ավելի ցածր պարունակությամբ
3. կալիումի ու նատրիումի ավելի բարձր և միզանյութի ավելի ցածր պարունակությամբ
4. նատրիումի ու միզանյութի ավելի բարձր և գլյուկոզի ավելի ցածր պարունակությամբ

10. Ենթաստամոքսային գեղձի հյուսիսը պարունակում է.

1. ինսուլին
2. ադաթթու
3. ամիլազ
4. պեպսին

11. Մարդու ձախ փորոքը մեծ է աջ փորոքից, որովհետև.

1. այն մղում է արյունը դեպի արյան շրջանառության մեծ շրջան, որում դիմադրությունը ավելի բարձր է, քան փոքր շրջանում
2. յուրաքանչյուր կծկման ընթացքում այն արյան ավելի մեծ ծավալ է դուրս մղում
3. այն կատարում է արյան մղման ողջ աշխատանքը
4. ժամանակի յուրաքանչյուր պահին նրա մեջ ավելի շատ արյուն է տեղավորվում

12. Եթե մկանի հյուսվածքային հեղուկում կալիումի իոնների կոնցենտրացիան բարձր է, ապա արյան հոսքը այդ մկանում

1. չի փոխվի
2. կմեծանա
3. կնվազի
4. կդադարի

13. Ո՞ր կենդանու կմախքը չունի քորդա.

1. նշտարիկ
2. շնաձուկ
3. տրիտոն
4. թառափ

14. Թթվածնով հարուստ արյունը թոքերից անցնում է.

1. աջ փորոք
2. ձախ փորոք
3. ձախ նախասիրտ
4. աջ նախասիրտ

15. Եթե սպիտակուցները կառուցվելին 14 ամինաթթուներով, ապա 1 ամինաթթուն կարող էր կոդավորվել առնվազն.

1. մեկ նուկլեոտիդով
2. երկու նուկլեոտիդով
3. երեք նուկլեոտիդով
4. չորս նուկլեոտիդով

Կարճ պատասխանով առաջադրանքներ

Ոլոռի սերմերի դեղին գույնը **A** դոմինանտ է կանաչ գույնի նկատմամբ **a**, իսկ հարթ մաշկը **B** դոմինանտ է կնճռոտի նկատմամբ **b**: Դեղին հարթ սերմերով հոմոզիգոտ բույսը խաչասերեցին կանաչ կնճռոտ սերմերով հոմոզիգոտ բույսի հետ: F_1 սերնդում ստացան 115 սերմ, իսկ F_2 ստացան 1712 սերմ: *Պատասխանեք 16-20 հարցերին*

16. F_1 սերնդում քանի՞ տարբեր գենոտիպեր կային:

17. Քանի՞ տիպի գամետ առաջացրեցին F_1 սերնդի բույսերը:

18. F_2 սերնդում դեղին հարթ սերմերով քանի՞ բույս կար:

19 F_2 սերնդում կանաչ կնճռոտ սերմերով քանի՞ բույս կար:

20. Քանի՞ ֆենոտիպ կար F_2 սերնդում: